գեանն Քրիստոսի. որ ցայժմ ջուր բղխէ: Սա արար աշխարհագիր ընդ ամենայն տեղիս՝ ըստ աւետարանին Ղուկասու: Նա էր յոյժ գեղեցիկ անձամբ և երեսօք:

Տիբերիոս Թագաւորեալ ամս ԻԳ. յամի Տեառն ԺԴ: Էր սա ցանկոտ խիստ. կեանքն ՁԲ. ամ: Յանկարծամահ մեռաւ 'ի ճանապարհին: Սա էր փեսայ Օգգաւիանի. և էր բարեբախտ և խոհեմ. յաւուրս սորա յԵրուսաղէմ Յովհաննէս Մկրտիչն գլխատի, և Քրիստոս Աստուած մեր խաչի: Սա զՊիղատոս սպանանէ, և զՀերովդէս ընդ Հերովդեայ կնոջ իւրում տարեալ 'ի Հռոմ՝ յաքսորս առաքէ 'ի Լեոն քաղաք. և անդ սատակին յետ չարչարանացն Քրիստոսի՝ հինգ ամ (անցեալ):

Գայիոս՝ եղբօրորդի Տիբերիոսի կայսեր, Թագաւորեաց ամս Գ. ամիս. Ը. յամի տեառն ԼԵ: Գայիոս՝ որ է Գալլոս

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան